ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/56

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Հ. Ղազարյանի (լիազորագիր, տրված՝ 22.06.2020թ.),

Հ. Քոյլոյանի (լիազորագիր, տրված՝ 22.06.2020թ.),

քննելով Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Աղբահանության և սանմաքրման համար անհրաժեշտ գույքի» ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13 ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից 24.06.2020թ. ներկայացված (24.06.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/56 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 24.06.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1. *Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.*

1.1 Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) 20.03.2020 թվականին հայտարարել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով բաց մրցույթի հայտարարություն (այսուհետ նաև Ընթացակարգ), իր կարիքների համար՝ «Աղբահանության և սանմաքրման համար անհրաժեշտ գույքի» ձեռքբերման նպատակով:

1.2 «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Ընթացակարգի շրջանակում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել հայտ 2-րդ չափաբաժնի մասով:

1.3 Ընթացակարգի շրջանակում 2-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, իսկ «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ հայտ է ներկայացրել մի քանի չափաբաժիններով՝ այդ թվում նաև, 2-րդ չափաբաժնով: Նշված ընկերությունները ներկայացրել են գնային առաջարկներ, որոնցից «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 10.0 մլն. ՀՀ դրամը չգերազանցող, իսկ «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ 10.0 մլն. ՀՀ դրամը գերազանցող: Արդյունքում Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, իսկ 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվել, համապատասխանաբար «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ և «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ: «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ չեն ներկայացրել հայտի ապահովումներ:

1.4 Հանձնաժողովը «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ կողմից հայտերը գնահատելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ երկու ընկերություններն էլ չեն ներկայացրել հայտի ապահովումներ:

1.5 «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտով ներկայացվել է նաև հայտի ապահովում:

1.6 Ընկերության կողմից 15.05.2020 թվականին ընթացակարգը բողոքարկվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

1.7 ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 05.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/67 որոշմամբ Ընկերության բողոքը մերժվեց, սակայն նույն որոշմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտնեց դիրքորոշում, որ Ընթացակարգի հանձնաժողովը պետք է 2-րդ չափաբաժնի մասով կիրառեր Կարգի 41-րդ կետի դրույթները և ներկայացնի առաջարկ «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ շտկելու անհամապատասխանությունները:

1.8 Հանձնաժողովը 11.06.2020 թվականին թիվ 5 արձանագրությամբ կասեցրեց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստը և «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ առաջարկեց շտկել գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանությունները, այն է տրամադրել հայտերի ապահովումները:

1.9 «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ ներկայացրեցին հայտի ապահովումներ կանխիկ փողի տեսքով, որոնց երկուսի վճարումներն էլ կատարվել է 12.06.2020 թվականին:

1.10 15.06.2020 թվականի թիվ 6 արձանագրության համաձայն ընտրված մասնակից է ճանաչվել «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ:

Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Ընթացակարգի հրավերի 4.3. կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման

ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.9 (2-րդ չափաբաժնի մասով):

Նույն հրավերի 7.4. կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: (...):

Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի պահանջը պետք է ներկայացվի նաև հրավերով: Իսկ հրավերի օրինակելի ձևով սահմանված է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշվված 90 աշխատանքային օր: Իսկ այն դեպքերում երբ հայտը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, այն ենթակա է մերժման, բացառություն է նախատեսվում այն դեպքում երբ արձանագրված անհամապատասխանության հիմքով մասնակցին հնարավորություն է տրվել շտկելու այն, այդ թվում՝ հայտի ապահովումը ներկայացնելը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հայտի հետ միասին ապահովումը չներկայացնելու համար Հանձնաժողովը տալիս է շտկման հնարավորություն, սակայն ներկայացվող ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օր, հակառակ դեպքում այն անհամապատասխան կլինի հրավերի պահանջներին և ենթակա կլինի մերժման:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ Ընթացակարգի հրավերով 2-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է հայտի ապահովման ներկայացման պարտադիր պայման, այսինքն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը: Սակայն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մասնակիցներից 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցները չեն ներկայացրել հայտի ապահովումներ: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 05.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-

2020/67 որոշման հիմքով հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց գնահատող հանձնաժողովի նիստը և մասնակիցներին հնարավորություն տվեց շտկելու անհամապատասխանությունները՝ ներկայացնելու հայտի ապահովումներ, սակայն շտկման արդյունքում ներկայացված հայտի ապահովումները ներկայացվել էին կանխիկ փողի տեսքով և վճարվել 12.06.2020 թվականին, որով պայմանավորված պետք է փաստել, որ «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի ապահովումների վավեր լինելու ժամկետները չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի 7.4. կետի պահանջներին, ուստի նշվածով պայմանավորված նրանց կողմից ներկայացված հայտերը ենթակա են մերժման: Նույն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հաջորդ 3-րդ տեղ է զբաղեցրել «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊ ընկերությունը, ում կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով ներկայացված պահանջներին՝ այդ թվում ներկայացվել է հայտի ապահովումը: Հաշվի առնելով նշվածը պետք է արձանագրել, որ Հանձնաժողովի կողմից 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ հայտերը գործող օրենսդրության պահանջներին համապատասխան մերժվելու պարագայում, որպես հաջորդ նվազագույն գին առաջարկած մասնակից կընտրվեր «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊ ընկերությունը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ նույն ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով կայացնելու.

1.«ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը վերացնելու որոշում,

2.«ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի հայտերը բավարար գնահատելու որոշումը վերացնելու որոշում,

3.«ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի հայտերը անբավարար գնահատելու և մերժելու որոշում,

4.«ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.07.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

Երևանի քաղաքապետարանը 01.07.2020թ. թիվ 02/61-62360h գրությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 24.06.2020 թվականի գրության՝ «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ բողոքաբեր) 24.06.2020 թվականին ներկայացրած բողոքի վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը.

Գտնում ենք, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորումներով:

Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձի 05.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-Լ0-2020/67 որոշումը և հաշվի առնելով որոշման 5-րդ կետով սահմանված բողոքը քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը՝ ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի դրույթներով, որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցելով «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ին և «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 12.05.2020թ. ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները, այն է՝ տրամադրել հայտերի ապահովումները:

«Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ի և «Բիգ պլաստ» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տրամադրվել են հայտերի ապահովման միջոցները (փաստաթղթերը)՝ կանխիկ փողի ձևով.

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ներկայացված հայտի ապահովումները՝ կանխիկ փողի ձևով, համապատասխանում են օրենսդրական պահանջներին:

Ուսումնասիրելով բողոքաբերի կողմից բերված բողոքը, որի հիմքում ըստ էության դրված է այն հանգամանքը, որ շտկման արդյունքում «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ի և «Գիգ պլաստ» ՍՊԸ-ի կողմից 12.06.2020 թվականին վճարված և ներկայացված հայտի ապահովումների՝ կանխիկ փողի տեսքով չեն համապատասխանում հրավերի 7.4 կետի պահանջներին, կարելի է եզրակացնել, որ ըստ բողոքաբերի, օրենսդրությամբ սահմանված հայտի ապահովման շտկումը կարող է ընդունվել միայն այն պարագայում,

երբ մասնակիցը հայտը տեղադրելու օրվա դրությամբ ունեցել է հայտի ապահովման փաստաթուղթ, սակայն ինչ ինչ պատճառներով այն չի ներբեռնել համակարգում:

Գնման ընթացակարգի հրավերով սահմանված է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն՝ հրավերով պարտադիր կերպով սահմանված է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն՝ հայտում ներառվող միայն մեկ փաստաթուղթ՝ գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն իրավանորմի իմաստից բխում է, որ մասնակիցը հրավերով սահմանված փաստաթղթերը՝ (բացի գնային առաջարկից), անկախ այն հանգամանքից, թե լրացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջների, թե ընդհանրապես կցված չեն, օրենսդիրը սահմանել է շտկման հնարավորություն և փաստաթղթերի շտկումը չի ենթադրում, որ դրանք պետք է վավերացված լինեն հայտը ներկայացնելու ամսաթվով, որը հնարավոր չէ իրականացնել:

«Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ն և «Բիգ պլաստ» ՍՊԸ-ն 12.06.2020 թվականին շտկել և ներկայացրել են հայտի ապահովումները՝ կանխիկ փողի ձևով, որը պահվում է լիազոր

մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում և սույն պարագայում չի կարող խախտվել հայտի ապահովման՝ 90 օրվա գործողության ժամկետը, այլապես օրենսդրությամբ սահմանված շտկման հնարավությունը իմաստազրկվում է:

Ավելին՝ գնումների մասին ՀՀ օրեսդրությունը սահմանելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքներ, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.07.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/56 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/56 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Աղբահանության և սանմաքրման համար անհրաժեշտ գույքի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13 ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊ, «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊ և «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչել «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցնող՝ «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ին, իսկ 3-րդ տեղ՝ «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.06.2020թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի 05.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/67 որոշումը, գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի դրույթներով, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցել «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը տրամադրել հայտերի ապահովումները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2020թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տրամադրվել են հայտերի ապահովման միջոցները (փաստաթղթերը)՝ կանխիկ փողի ձևով, որոնք համապատասխանում են օրենսդրական պահանջներին:

5. Նույն արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, 2-րդ տեղ զբաղեցնող՝ «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ն, իսկ 3-րդ տեղ՝ «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ն և սահմանվել է անգործության ժամկետ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ի 24.06.2020թ. ներկայացված բողոքը, Երևանի քաղաքապետարանի 01.07.2020թ. գրությունը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտ ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով,

ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող

ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 4.3. կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ. (2-րդ չափաբաժնի մասով):

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվում է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Նույն կետի 7.4 ենթակետով սահմանվում է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Աղբահանության և սանմաքրման համար անհրաժեշտ գույքի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13 ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպտակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊ, «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊ և «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, 2-րդ չափաբաժնի մասով

ընտրված մասնակից է ճանաչել «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցնող՝ «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ին, իսկ 3-րդ տեղ՝ «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.06.2020թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 05.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/67 որոշումը, գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի դրույթներով, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցել «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը տրամադրել հայտերի ապահովումները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2020թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տրամադրվել են հայտերի ապահովման միջոցները (փաստաթղթերը)՝ կանխիկ փողի ձևով, որոնք համապատասխանում են օրենսդրական պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, 2-րդ տեղ զբաղեցնող՝ «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ն, իսկ 3-րդ տեղ՝ «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ն և սահմանվել է անգործության ժամկետ:

Այսպիսով՝ «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով 2-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է հայտի ապահովման ներկայացման պարտադիր պայման, այսինքն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը: Սակայն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մասնակիցներից 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցները չեն ներկայացրել հայտի ապահովումներ: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 05.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/67 որոշման հիմքով հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է գնահատող հանձնաժողովի նիստը և մասնակիցներին հնարավորություն տվել շտկելու անհամապատասխանությունները՝ ներկայացնելու հայտի ապահովումներ, սակայն շտկման արդյունքում ներկայացված հայտի ապահովումները ներկայացվել են կանխիկ փողի տեսքով և վճարվել 12.06.2020 թվականին, ինչով պայմանավորված պետք է փաստել, որ «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված հայտի ապահովումների վավեր լինելու ժամկետները չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի 7.4. կետի պահանջներին, ուստի նշվածով պայմանավորված՝ նրանց կողմից ներկայացված հայտերը ենթակա են մերժման:

Անդրադառնալով բողոքաբերի կողմից ներկայացված այն փաստին, որ «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումների վավեր լինելու ժամկետները չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի 7.4. կետի պահանջներին, ինչով պայմանավորված նրանց կողմից ներկայացված հայտերը ենթակա են մերժման, ապա սույն մասով, գործում եղած փաստերի համաձայն, արձանագրում եմ հետևյալը.

«ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից հայտով չէին ներկայացվել հրավերով պահանջվող հայտի ապահովման միջոցները, սակայն վերջիններս, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով, ներկայացրել են հայտի ապահովումները՝ կանխիկ փողի ձևով՝ վճարված 12.06.2020 թվականին:

Այսպես՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սամանվում է, որ ***հայտ ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով սպանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:***

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում***, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: ***Հայտի ապահովումը ներկայացվում է*** միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ ***կանխիկ փողի ձևով***: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվում է, որ ***մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:*** Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Ընդ որում՝ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում՝ ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը***, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով

նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում ***<u>իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>***, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:</u>*** Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես՝ Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները՝ հրավերի պահանջների նկատմամբ, ենթակա են շտկման, միաժամանակ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է շտկման անթույլատրելիություն միայն գնային առաջարկի մասով, այսինքն՝ մնացած բոլոր դեպքերում կիրառելի է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման պահանջը:

Ինչ վերաբերում է բողոքով ներկայացված այն փաստարկին, որ հրավերի 7.4. կետի համաձայն **հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից** 90 աշխատանքային օր, ապա սույն մասով գտնում եմ, որ նման դիրքորոշումը հիմնավոր չէ, քանի որ Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությամբ չի մանրամասնվում, այն է՝ չի նշվում, թե արդյոք մասնակիցը պետք է միայն շտկի արդեն իսկ ներկայացրած հայտի ապահովումը, թե նա իրավունք ունի ներկայացնելու նաև հայտի նոր ապահովում, որը նույնպես դիտարկվում է որպես անհամապատասխանության շտկում: Հետևաբար հայտի նոր ապահովում ներկայացնելու պայմաններում հնարավոր չէ ապահովել վավերականությունը հայտը ներկայացնելու

օրվանից հաշված, քանի որ նման պայմաններում Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությունը կիմաստազրկվի:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից 24.06.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**